ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2019Թ. ՀՈՒԼԻՍԻ -Ի
ԹԻՎ -Ա ՈՐՈՇՄԱՄԲ

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ. ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Արմավիր համայնքի 2019թ. բյուջեն առաջին կիսամյակում ըստ եկամտատեսակների կատարվել է հետևյալ համամասնություններով.

1.Հարկային եկամուտներ

Հարկային եկամուտների գծով առաջին կիսամյակում 91670,0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 88759.2 հազ. դրամ կամ կատարվել է 96.8 % - ով՝ այդ թվում.

1. Հողի հարկի գծով նախատեսված 9330.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 7801.0 հազ. դրամ կամ կատարվել է 83.6 % - ով:
2. Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար պլանով նախատեսված 23670.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 20396.7 հազ. դրամ կամ կատարվել է 86.2 %-ով:
3. Գույքահարկ փոխադրամիջոցների համար պլանով նախատեսված 58670.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 60561.5 հազ. դրամ կամ կատարվել է 103.2 %-ով:

2. Տուրքեր

1. Պետական տուրքերի գծով նախատեսված 14400.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 13965.2 հազ. դրամ կամ կատարվել է 97.0 %-ով:
2. Տեղական տուրքերի գծով նախատեսված 15190.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 14308.0 հազ. դրամ կամ կատարվել է 94.2 %-ով:

Նույն թվում՝

ա) համայնքի տարածքում նոր կառուցվող օբյեկտների և շինությունների շինարարությունը սկսելու թույլտվության մուտքերի գծով նախատեսված 418.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 356.0 հազ. դրամ կամ կատարվել է 85.2 %:

բ) համայնքի տարածքում գտնվող օբյեկտները վերակառուցելու աշխատանքներ կատարելու թույլտվության մուտքերի գծով նախատեսված 84.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 258.0 հազ. դրամ կամ կատարվել է 307.1 % - ով:

գ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար նախատեսված 15.0 հազ. դրամի դիմաց փաստցի մուտքերը կազմել են 10.0 հազ. դրամ կամ կատարվել է 66.7 % - ով:

դ) համայնքի տարածքում ոգելից խմիչքներ և (կամ) ծխախոտի արտադրանքի ընթացիկ տարվա համար վաճառքի թույլտվության համար մուտքերի գծով նախատեսված 2981.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 3227.4 հազ. դրամ կամ կատարվել է 108.3 % - ով:

ե) համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության մուտքերի գծով նախատեսված 1022,0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 999.8 հազ. դրամ կամ կատարվել է 97.8 % - ով:

զ) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար գազի և վառելիքաքսայուղային նյութերի վաճառքի գծով 2700.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 2420,0 հազ. դրամ կամ կատարվել է 89.6 %-ով:

է) Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար մուտքերի գծով նախատեսված 575.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 552.1 հազ. դրամ կամ կատարվել է 96.0 %-ով:

ը) համայնքի տարածքում ընթացիկ տարվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության մուտքերի գծով նախատեսված 5520.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 4562.2 հազ. դրամ կամ կատարվել է 82.6 %-ով:

թ) համայնքի տարածքում մարդատար տաքսի ծառայություն ընթացիկ տարում իրականացնելու թույտվության մուտքերի գծով նախատեսված 90.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 92.5 հազ. դրամ կամ կատարվել է 102.8 %-ով:

ժ) համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար նախատեսված 800.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 850.0 հազ. դրամ կամ կատարվել է 106.3 %-ով:

ի) Համայնքի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար մուտքերի գծով նախատեսված 360.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 330.0 հազ. դրամ կամ կատարվել է 91.7 %-ով:

լ) Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար մուտքերի գծով նախատեսված 625.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 650.0 հազ. դրամ կամ կատարվել է 104.0 %-ով:

3. Պաշտոնական դրամաշնորհներ

Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհների գծով նախատեսված 218716.7 հազ. դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 218716.7 հազ. դրամ կամ կատարվել է 100.0 %-ով:

ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների գծով նախատեսված 217062.3 հազ. դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 217062.3 հազ. դրամ կամ կատարվել է 100.0 %-ով:

բ) Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումների (սուբվենցիաներ) գծով նախատեսված 1654.4 հազ. դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 1654.4 հազ. դրամ կամ կատարվել է 100.0 %-ով:

4. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Այլ եկամուտներից մուտքերի գծով նախատեսված 84561.7 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 80184.6 հազ. դրամ կամ կատարվել է 94.8 %-ով:

Նույն թվում՝

1. հողերի վարձակալության գծով նախատեսված 15100.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 11796.7 հազ. դրամ կամ կատարվել է 78.1 % - ով
2. գույքի վարձակալության գծով նախատեսված 1606.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 870.7 հազ. դրամ կամ կատարվել է 54.2 % - ով:
3. ՏԻՄ-ներին պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար ստացվող միջոցների գծով պլանով նախատեսված 3310.7 հազ. դրամի դիմաց փաստացի ֆինանսավորումը կազմել է 3310.7 հազ. դրամ կամ կատարվել է 100.0 %-ով:

4. Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարների գծով նախատեսված 3511.0 հազ. դրամի փաստացի մուտքը կազմել է 2738.2 հազ. դրամ կամ կատարվել է նախատեսվածի նկատմամբ 78.0 %-ով:

5. Տեղական վճարների գծով նախատեսված 59734.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 56812.8 հազ. դրամ կամ կատարվել է 95.1 % - ով, այդ թվում աղբահանության վճարի գծով նախատեսված 22170.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 17414.5 հազ. դրամ կամ կատարվել է 78.5 % - ով:

6. Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարների գծով նախատեսված 500.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 2945.5 հազ. դրամ կամ կատարվել է 589.1 % - ով:

7. Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներից նախատեսված 200.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 1200.0 հազ. դրամ կամ կատարվել է 600.0 % - ով:

8. Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի բյուջե մուտքագրվող այլ ոչ հարկային եկամուտների գծով նախատեսված 600,0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 510,0 հազ. դրամ կամ կատարվել է 85.0 %-ով:

Արմավիր համայնքի 2019թ. բյուջեի առաջին կիսամյակում ընդամենը նախատեսված 424538.4 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 415933.7 հազ. դրամ կամ կատարվել է 98.0 %-ով, սեփական եկամուտների գծով նախատեսված 202511.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 193906.3 հազ. դրամ կամ կատարվել է 95.8 % - ով:

ԾԱԽՍԵՐ

Արմավիր համայնքի 2019թ. բյուջեն առաջին կիսամյակում ըստ ծրագրերի ծախսերը կատարվել են՝

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. « Օրենսդիր և գործադիր մարմիններ» 01 բաժին 1-ին խումբ 1-ին դաս՝ նախատեսված 61604.0 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 45952.4 հազ. դրամ կամ կատարվել է 74.6 %-ով:
2. Աշխատակազմի /կադրերի/ գծով ընդհանուր բնույթի ծառայությունների գծով՝ ՔԿԱԳ բաժին, 01 բաժին 3-ին խումբ 1-ին դաս՝ նախատեսված 3678.9 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 3007.0 հազ. դրամ կամ կատարվել է 81.7 %-ով:
3. «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» 01 բաժին 3-ին խումբ 3-ին դաս՝ նախատեսված 4172.8 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 3361.7 հազ. դրամ կամ կատարվել է 80.6 %-ով:
4. «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» 01 բաժին 6-ին խումբ 1-ին դաս՝ նախատեսված 67696.7 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 2627.5 հազ. դրամ կամ կատարվել է 3.9 %-ով:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1..Ոռոգում՝ 04 բաժին 2 խումբ 4 դաս՝ նախատեսված 12622.9հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 9020.6 հազ. դրամ կամ կատարվել է 71.5 %-ով:

2. ճանապարհային տրանսպորտ 04 բաժին 5 խումբ 1 դաս՝ նախատեսված 44774.4 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 3366.1 հազ. դրամ կամ կատարվել է 7.5 %-ով:

3.Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող) Ոչ ֆին. ակտիվների օտարումից մուտքեր 04 բաժին 9 խումբ 1 դաս՝ նախատեսված -3067.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են - 416.0 հազ. դրամ կամ կատարվել է 13.6 %-ով:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Աղբահանում 05 բաժին 1-ին խումբ 1-ին դաս՝ նախատեսված 79038.5 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 58433.8 հազ. դրամ կամ կատարվել է 73.9 %-ով:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

1. Ջրամատակարարում 06 բաժին 3 խումբ 1-ին դաս՝ նախատեսված 640.0 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 0.0 հազ. դրամ կամ կատարվել է 0 %-ով:

2. Փողոցների լուսավորում 06 բաժին 4 խումբ 1-ին դաս՝ նախատեսված 18806.8 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 12430.1 հազ. դրամ կամ կատարվել է 66.1 %-ով:

3.Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող) 06 բաժին 6 խումբ 1-ին դաս՝ նախատեսված 1950.0 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 1795.3 հազ. դրամ կամ կատարվել է 92.1 %-ով:

ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ

1.Գրադարաններ 08 բաժին 2 խումբ 1 դաս՝ նախատեսված 11106.3 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 10736.4 հազ. դրամ կամ կատարվել է 96.7 %-ով:

2.Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ 08 բաժին 2 խումբ 3 դաս՝ նախատեսված 9299.6 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 8486.4 հազ. դրամ կամ կատարվել է 91.3 %-ով:

3. Այլ մշակութային կազմակերպություններ 08 բաժին 2 խումբ 4 դաս՝ նախատեսված 8820.7 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 8067.3 հազ. դրամ կամ կատարվել է 91.5 %-ով:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

1.Նախադպրոցական կրթություն ծախսերի գծով 09 բաժին 1-ին խումբ 1-ին դաս՝ նախատեսված 137795.0 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 121316.3 հազ. դրամ կամ կատարվել է 88.0 %-ով:

2.Արտադպրոցական դաստիարակություն 09 բաժին 5 խումբ 1-ին դաս՝ նախատեսված 67291.8 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 59272.6 հազ. դրամ կամ կատարվել է 88.1 %-ով:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող), 10 բաժին 7 խումբ 1-ին դաս՝ նախատեսված 4099.0 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 3603.0 հազ. դրամ կամ կատարվել է 87.9 %-ով:

ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ

1.ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ 11 բաժին 1-ին խումբ 2 դաս՝ նախատեսված գումարը կազմում է 3081.5 հազ. դրամ:

Արմավիր համայնքի 2019թ. բյուջեի առաջին կիսամյակում ընդամենը նախատեսված 533411.9 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 351060.5 հազ. դրամ կամ կատարվել է 65.8 %-ով:

ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԻՖԻՑԻՏԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Արմավիր համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի պակասուրդը (դեֆիցիտը) նախատեսված 108873.5 հազ. դրամի դիմաց փաստացի հավելուրդը կազմել է 64873,2 հազ. դրամ: